Հայ միջնադարյան գրականություն

ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ

(մոտ 1100 -1173)

Ներսես Շնորհալի՝ Պահլավունի, Ներսես Դ Կլայեցի, երգեցող, հայ բանաստեղծ, մատենագիր, երաժիշտ-երգահան, քաղաքական գործիչ, Հայոց կաթողիկոս՝ 1166-ից: Հաջորդել է Գրիգոր Գ Պահլավունուն՝ իր ավագ եղբորը: Իշխան Ապիրատ Պահլավունու որդին է, Գրիգոր Մագիստրոս Պահլավունու ծոռը:

ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ներսես Շնորհալին ծնվել է Հայոց Միջագետքի Տլուք գավառի Ծովք ամրոցում՝ կառուցված Սև լեռան մի ժայռոտ բարձունքին: Այդ լեռան բազմաճյուղ լանջերին եղել են հայկական վանքեր, որոնք դարձել են ժամանակի հայ դպրության կարևոր օջախներ: Ներսեսը նախ սովորում է այդ դպրոցներից մեկում, ապա հիմնավոր կրթություն է ստանում Քեսունի Կարմիր վանքի վարդապետարանում:

Ուսումնառությունից հետո դառնում է հոգևորական: Քաղաքական անհանգիստ կյանքի թելադրանքով հարկադրված է լինում իր ավագ եղբոր՝ Հայոց կաթողիկոս Գրիգոր Պահլավունու հետ անցնել տեղից տեղ և, ի վերջո (1150 թ.), հիմնավորապես հաստատվում է Կիլիկիայի նշանավոր Հռոմկլա բերդաքաղաքում:

Հռոմկլայում հաստատված Հայոց կաթողիկոսարանը, հայության հոգևոր կյանքը ղեկավարելուց բացի, զարկ է տալիս նաև կրթությանը, մշակույթին և գրականությանը: Գրիգոր և Ներսես Պահլավունիներն զբաղվում են գրական բեղմնավոր գործունեությամբ, կատարում են թարգմանություններ, հավաքում և արտագրում են բազում ձեռագիր գրքեր:

1166 թվականին Ներսես Շնորհալին ստանձնում է կաթողիկոսական գահը և մինչև կյանքի վերջը վարում է այն՝ դրսևորելով դիվանագետի և ազգային-հոգևոր առաջնորդի փայլուն ունակություններ: Նա ամրապնդում է Կիլիկիայի հայկական մեծ իշխանապետության և Եկեղեցու հիմքերը, դառնում համաքրիստոնեական վարք ու ճանաչում ունեցող ականավոր գործիչ ու մատենագիր: Նրան ժամանակակիցներն ու հաջորդները մեծարել են՝ համարելով «Տիեզերալոյս վարդապետ», «Երկրորդ Լուսավորիչ Հայոց»: Պատմիչ Կիրակոս Գանձակեցու գնահատմամբ՝ «Ներսեսն իմաստությամբ ավելի մեծ էր, քան իր ժամանակի բազում վարդապետներ և ոչ միայն Հայոց, այլև հույների ու ասորիների մեջ, այնքան, որ նրա իմաստության համբավը տարածվեց բոլոր ազգերի մեջ»:

Չափազանց հարուստ, բազմաժանր ու բազմաբովանդակ գրական ժառանգություն է թողել Շնորհալին: Նա գրել է արձակ և, ավելի շատ, բանաստեղծական գործեր՝ շարականներ, ժամերգեր, գանձեր, տաղեր, զանազան բնույթի բանքեր, չափածո թղթեր, հանելուկներ:

Ներսես Շնորհալին հայ բանաստեղծության մեջ կատարել է մի շարք նորամուծություններ, ստեղծել է գրական նոր տեսակներ: Նա է բանքերի ձևով գրված մեր առաջին չափածո պատմության, պատմական ողբի, տիեզերագիտական երկի, չափածո ներբողյանի, ուղերձի ու մաղթանքի հեղինակը: Նորություն են

նաև մանկավարժ-բանաստեղծի չափածո խրատները, ուսուցողական բնույթի բանաստեղծություններն ու հանելուկները:

ՀՈԳԵՎՈՐ ԵՐԳԵՐԸ

Ներսես Շնորհալու հեղինակած հոգևոր երգերի ամենահարուստ բաժինն են կազմում շարականները, որոնց թիվն անցնում է 200-ից: Դրանք, անկախ թվաքանակից, ունեն թեմատիկ բազմազանություն և կատարման բարձր արվեստ:

Շնորհալին բազում գեղեցկաոճ շարականներով համալրել է նախկին մեծ օրհներգուների երգաշարերը: Նա նոր գեղարվեստական մակարդակի է հասցրել շարականագրությունը, յուրովի հնչեցրել Ոսկեդարից եկող լուսերգությունը:

Լույսով են ողողված նաև Շնորհալու ազգային-հայրենասիրական թեմաներով գրված շարականները: Դրանք ձոնված են Տրդատ թագավորին, Գրիգոր Լուսավորչին, Սահակ Պարթևին, Վարդանանց և Ղևոնդյանց նահատակներին: Բանաստեղծը՝ համակված Եղիշեի Պատմության հերոսական խանդավառությամբ, հայրենի չափով հյուսել է «Նորահրաշ պսակաւոր» հոգևոր-հերոսական երգը: Սա ազգային թեմայով հորինված լավագույն շարականն է: Շարականի հիմնական արժեքը ազգասիրական, ազատասիրական ոգին է, որ թևածում է արիաբար պատերազմած հայկազուն նահատակների գովերգության մեջ:

Շնորհալին գեղեցիկ ու ինքնատիպ մակդիրներով գովերգում է Ավարայրի հերոսներին՝ սկսած Վարդան Մամիկոնյանից մինչև հայրենիքի համար զոհված և անմահության պսակ ստացած քաջարի իշխանազուններն ու շարքային մարտիկները: Կարդանք առաջին տունը.

Նորահրաշ պսակաւոր
եւ զօրագլուխ առաքինեաց,
վառեցար զինու Հոգւոյն
արիաբար ընդդէմ մահու,
Վարդան, քաջ նահատակ,
որ վանեցեր ըզթըշնամին,
վարդագոյն արեամբըդ քո
պսակեցեր զԵկեղեցի:

(Նոր հրաշքով պսակավորված և զորագլուխ խիզախների, Սուրբ հոգու

զենքով արիաբար զինվեցիր ընդդեմ մահի, Վարդան, քաջ նահատակ, վանեցիր թշնամուն, քո վարդագույն արյամբ պսակեցիր Եկեղեցին):

Հայրենի սրբերին ձոնված շարականներում մեծ բանաստեղծի սևեռուն գաղափարներն են եղել հայ ժողովրդի ազատագրությունն ու լուսավորությունը:

Շնորհալու հոգևոր քերթության մի կարևոր մասն են կազմում նաև նրա հեղինակած ժամերգերը: Դրանցով կաթողիկոս-բանաստեղծը չափազանց հարստացրել է մեր Եկեղեցու ժամերգությունը: Սրանք ևս միջնադարյան լուսերգության մեծարժեք նմուշներ են: Նշանավոր է հատկապես հայոց այբուբենի տառերի հաջորդականությամբ հյուսված «Առավոտ լուսո» ժամերգը, որը Շնորհալու և, առհասարակ, հայ հոգևոր բանաստեղծության գլուխգործոցներից է: Ամբողջ երգը ողողված է Արդար Արեգակ Քրիստոսի խորհրդանշական լույսով.

Առաւօտ լուսոյ,
Արեգա՛կն արդար,
առ իս լո՛յս ծագեա...

(Առավո՛տ լույսի, Արեգա՛կ արդար, ինձ լո՛ւյս ծագեցրու...):

Ներսես Շնորհալու հոգևոր երգերում ուղղակիորեն կամ անուղղակիորեն դրսևորվել են մեծ բանաստեղծի հումանիզմը՝ մարդասիրությունը, ազատասիրությունն ու հայրենասիրությունը, բարոյական իդեալները, ձգտումը դեպի լույսն ու լուսավորությունը:

ԲԱՆՔԵՐԸ

Շնորհալին հեղինակել է բազմաթիվ բանքեր՝ բովանդակային մի շարք տարատեսակներով՝ կրոնական, գիտական-ուսուցողական, ներբողական, խրատական, ողբական, պատմական-ազգասիրական և այլն:

Շուրջ քսան տարեկան հասակում է նա գրել «Վիպասանություն» անունով հայտնի պատմական բանքը: Այստեղ նա չափաբերել է Հայոց պատմությունը՝ սկսած առաջին հայ թագավորներից մինչև իր ժամանակները՝ հետևելով այն գաղափարին, թե նոր սերունդը պարտավոր է հիշել և արժանին մատուցել նախնիներին: Նա Պատմահայր Խորենացու հետևությամբ սկզբունք է ընդունել ժամանակագրորեն պատկերել պատմական անձերին՝ ըստ իրենց գործերի, անշուշտ՝ հիմնական նպատակակետը համարելով հայրենիքի բարօրությունը: Բանաստեղծը ոչ միայն ոգեկոչել է իր ժողովրդի պատմական անցյալը, այլև պատկերել է նրա ներկան՝ այն, ինչին ականատես է եղել: Դա նորություն էր

մեր բանաստեղծության մեջ:

Ներսես Շնորհալին հեղինակել է նաև «ուսումնական մանկանց» ուղղված հայ խրատական բանաստեղծության առաջին նմուշները: Իսկ իր եղբորորդուն՝ Ապիրատին հասցեագրված թուղթ-բանքը աշխարհիկ ներբողի մի ուշագրավ նմուշ է:

Շնորհալու ժառանգության մեջ յուրահատուկ տեղ ունի «Յաղագս երկնից եւ զարդուց նորա» («Երկնքի և նրա զարդերի մասին») տիեզերագիտական բանքը: Գրված է մեծ բժշկապետ Մխիթար Հերացու խնդրանքով և հետապնդում է ուսուցողական նպատակներ:

Շնորհալու բանաստեղծական գլուխգործոցներից է «Հիսուս Որդի» աղոթական-ողբական բանքը: Այն թեև կրում է Գրիգոր Նարեկացու «Ողբերգության մատյանի» անմիջական ազդեցությունը, սակայն ունի բոլորովին այլ արժեք:

Շնորհալին միստիկ չէ և, իր մեծ նախորդի նման, չի արծարծել մարդու աստվածացման գաղափարը: Նա ընդամենն արտահայտել է մարդուն մեղքերից մաքրված տեսնելու իր բաղձանքը, քանի որ ջերմ սիրով է համակված մարդու հանդեպ: Այստեղ էլ, ահա, ինչպես հոգևոր երգերում, դրսևորվել է մեծ բանաստեղծի մարդասիրությունը:

«Հիսուս Որդի» բանքի հեղինակը ևս իր մեջ խտացնում է բոլոր ժամանակների մարդուն՝ խոսելով Աստծո հետ «դեմ-հանդիման», արտահայտելով ամենատարբեր հոգեվիճակներ:

Շնորհալու ողբական բանքը պարփակված է միաչափ ու միահանգ սահուն ոտանավորի մեջ: Դա նման է խոր ու հանդարտահոս գետի, որն ավելի շատ ձգտում է մաքրել մարդուն, կրթել նրա հոգին ու միտքը, երկրային ստոր վիճակներից հասցնել նրան ոգու երկնային մաքուր ոլորտները: Այսինքն՝ բանաստեղծն այս դեպքում ևս ձգտել է գրել ուսուցողական ու բարոյակրթական ստեղծագործություն: Դա ժամանակի պահանջն էր:

Կենդանի ու մատչելի լեզվով ու ոճով գրված այս երկի շարադրանքը հաճախ ընդմիջվում է հեղինակի երևակայության թռիչքներով ու քնարական զեղումներով: Բանքի քնարական հատվածները միջնադարում երգվել են քաղցրալուր եղանակներով և պոկվելով ամբողջից՝ տարածվել իբրև ինքնուրույն երգ-բանաստեղծություններ: Առհասարակ, ամբողջ «Հիսուս Որդին» կարդացվել է թվերգի ձևով (թվերով երգելով) և հատվածաբար երգվել որպես յուրօրինակ հոգևոր էպոս:

Ինչպես Գրիգոր Նարեկացին իր Մատյանը համարել է իր անմահության հուշարձանը, այնպես և Շնորհալին երկրորդ Նարեկ կոչված իր այս աղոթական-

ողբական բանքի մասին ասել է. «Միշտ յիշատակ սա եղիցի. այժմ եւ յաւուրն ապագայի» (Սա թող միշտ հիշատակ լինի. այժմ և օրերին գալիք):

Նարեկի հետ միասին «Հիսուս Որդին» համարվել է հոգիները բուժող աղոթամատյան: Ահա թե ինչու այդ երկը Շնորհալու մյուս գործերից ավելի շատ է տարածվել ձեռագիր թե տպագիր օրինակներով...

Պատմական-ողբական բանք է «Ողբ Եդեսիո» երկը: Ինչպես «Նորահրաշ պսակաւոր» շարականը, «Առաւօտ լուսո» ժամերգը և «Հիսուս Որդի» աղոթական-ողբական բանքը, այս երկը ևս Ներսես Շնորհալու բանաստեղծական գլուխ-գործոցներից է:

1144 թվականին Հալեպի և Մոսուլի կառավարիչ Զանգին պաշարում է Միջագետքի նշանավոր Եդեսիա քաղաքը, որը մեկամսյա մաքառումից հետո ընկնում է: Թշնամին ավերում է ծաղկուն քաղաքը, որ հայկական, ասորական և հունական մշակույթների խառնարան էր: Հիշենք, որ այստեղ էր Մեսրոպ Մաշտոցն արարել հայկական գրերը, և որի հարուստ գրադարաններում տքնել էր Մովսես Խորենացին:

Զանգիի հորդաները ավերում են Եդեսիան, կոտորում ու կողոպտում բնակ-չությանը, որի հիմնական մասը հայեր էին: Ուստիև այս շեն հայաքաղաքի կործանումը վերածվել է համահայկական ողբերգության, որի լավագույն արտա-հայտիչն է Ներսես Շնորհալին:

Եդեսիայի պաշարմանն ու գրավմանն ականատես է եղել Շնորհալու եղբորորդի Ապիրատը, որն ազատվելով՝ փախչում է Ծովք և այդ իրողության մասին պատմելով մեծանուն հորեղբորը՝ խնդրում է նրան վիպերգությամբ անդրադառնալ այդ աղետին: Այդպես, ահա, ծնունդ է առնում «Ողբ Եդեսիո» պատմական-ղոբական բանքը:

Այս երկում ավերված քաղաքը պատկերված է որդեկորույս և սգավոր այրի կնոջ կերպարանքով: Եղերամայրերով շրջապատված ողբացող այրին հիշեցնում է իր երանելի անցյալը, ողբում է իր զոհված զավակների համար, անիծում ոսոխներին, վրեժխնդրության կոչ անում: Մայրական սրտից ու շուրթերից բխած այդ ողբն անչափ հուզիչ է: Մեր առջև Եդեսիան բացվում է իր գեղեցիկ բնությամբ, հոյակապ շինություններով, փայլով ու ճոխությամբ: Քաղաքն ինքը խոր ցավով ներկայացնում է իր երբեմնի գեղեցկությունը: Ահա մի հատված նրա խոսքից՝ աշխարհաբարի վերածմամբ.

Ինձնից կյանքի ջուր էր բխում,
զվարթածաղիկ բույսեր ծնում,

գետերի պես վտակ հոսում,
բուրաստանները ոռոգում...

Այս դրվագում, առաջին անգամ հայ բանաստեղծության մեջ, նկարագրվում է բնությունը՝ առանց այլաբանության:

«Ողբ Եդեսիո» բանքի արժեքը նաև նրա խոր հայրենասիրական բովանդակության մեջ է: Բանաստեղծը մորմոքվում է ոչ միայն Եդեսիա հայաքաղաքի, այլև բուն հայաստանյան քաղաքների տխուր վիճակի համար: Որբևայրի Եդեսիան իրեն ձայնակցելու համար դիմում է Աստծո լույսն ընդունած Շողակաթ-Էջմիածնին: Դիմում է նաև իրենից առաջ կործանված Անիին.

Բայց և զքեզ եմ հրաւիրում այստեղ,
Անի քաղա՛ք արևելյան,
դու մասնակի՛ց եղիր ձայնիս
և սփոփիչ տարակույսիս,
քանզի առաջ դու էլ էիր
վայելուչ հարս մի քողակիր,
մերձաւորին՝ շատ ցանկալի,
հեռաւորին՝ փափագելի...

Ներսես Շնորհալին հայությանը պատուհասած աղետների պատճառը համարում է անօրեն-այլադավան թշնամուն, որը հանդես է գալիս հատկապես թուրքի կերպարով:

Բանաստեղծը լավատեսորեն է նայել իր հայրենիքի ապագային՝ հուսալով, որ չարագործները կպատժվեն, և, քրիստոնյա աշխարհի օգնությամբ, կթոթափվի մահմեդականների ծանր լուծը: Մեծ բանաստեղծը պատմականորեն իրավացի էր, քանի որ, թուրքի առկայությամբ հանդերձ, մեր ժողովուրդը շարունակել է ու պիտի շարունակի ապրել...

«Ողբ Եդեսիո» բանքը մեր առաջին պատմաողբն է՝ աշխարհիկ բովանդակությամբ հայերգություն՝ տոգորված ջերմ հայրենասիրությամբ: Այն ողջ հայ ողբական բանաստեղծության գլուխգործոցն է և իր պատվավոր տեղն է գրավում Մովսես Խորենացու Ողբի և Խաչատուր Աբովյանի «Ողբ հայրենասիրի» երկի միջև:

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐԸ

Ներսես Շնորհալին ժողովրդական բանահյուսության հիման վրա ստեղծել է մի նոր գրական տեսակ՝ չափածո հանելուկը: Հայտնի են նրա հեղինակած շուրջ 300 հանելուկներ:

Կիրակոս Գանձակեցին նշել է, թե ինչ նպատակով էին ստեղծվել և որտեղ պիտի կիրառվեին Շնորհալու հանելուկները. «որպեսզի առասպելների փոխարեն՝ դրանք ասվեն խնջույքներին ու հարսանիքներին»: Հանելուկների մի մասն էլ հասցեագրված է ուսումնական լսարանին:

Կաթողիկոս-բանաստեղծն իր այդ գործերը գրել է առավելապես ժամանակի խոսակցական լեզվով, հիմնականում ութավանկ չափով, քառատող, միահանգ, պարզ ու հասկանալի, ժողովրդական բառ ու բանի, զավեշտի ու հումորի առատ օգտագործմամբ: Դրանք նպատակ ունեն ոչ այնքան մարդկանց ուրախացնել, որքան զվարճալի եղանակով գիտելիքներ հաղորդել:

Կրոնական բնույթի հանելուկներում անգամ Շնորհալին դիմում է զավեշտի, այդուհանդերձ նա հոգևորականության և կրոնի ծաղր չի անում, այլ միայն որոշ չափով տուրք է տալիս ժողովրդական բարեհոգի զվարճախոսությանը: Դա էլ նորություն ու նորամուծություն էր աշխարհիկացող մեր գրականության մեջ, որտեղ շատ չանցած պիտի երևան գային նաև Մխիթար Գոշի և Վարդան Այգեկցու առակները...

Իր բազում հանելուկներով Շնորհալին ձգտել է մարդկանց ճանաչել տալ ու սիրելի դարձնել իրական, կենդանի բնությունն իր գեղեցկություններով: Մի շարք հանելուկների առարկա են դարձել ջուրը, ծովը, գետը, բնական-տարերային երևույթները, ծաղիկներն ու ծառերը, մրգերն ու բանջարեղենը, հատկապես՝ կենդանիները: Ահա նուռը ներկայացնող հանելուկը.

Է նա կանաչ կոճակ բոլոր,
անպակ գինով լըցած տըկճոր.
կարմիր մեղուք ի ներս աղուոր.
եղբա՛յր, դու կե՛ր զինչ մեղր ի ծոր:

(Նա կանաչ կոճակ է կլոր, անապակ գինով լցված տկճոր, մեջը՝ կարմիր մեղուներ սիրուն. եղբա՛յր, դու կեր որպես մեղր ծորուն):

Լինելով գրի ու գրականության ջատագով և մեծ մանկավարժ ու լուսավորիչ, Շնորհալին բազմաթիվ հանելուկներ է նվիրել այբուբենին, գրերին ու գրքին:

Գիրքը թռիչք է հաղորդում ընթերցողի մտքին, որն «անթեւ եւ անփետուր, քան զծիծառն երթայ սուր»:

Բանաստեղծը հանելուկներում արծարծել է նաև ազգային թեման: Հայ ժողովրդին պատկերող հանելուկի մեջ նա ազգային հպարտությամբ արձանագրում է.

Քան զամենայն ազգ այլ ի վեր՝
ազգ մի գիտեմ՝ հաւսար քաջեր...

Շնորհալու հանելուկների մեծ մասը աշխարհիկ բանաստեղծություններ են և կազմում են նրա ստեղծագործության մի յուրօրինակ ու կենսունակ բաժինը:

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԸ

Մեծ է Ներսես Շնորհալու դերը հայ բանաստեղծական արվեստի զարգացման գործում: Հետևելով Հովհաննես Սարկավագին՝ նա գրականության և արվեստի գեղեցկությունը տեսել է բնականին հետևելու մեջ: Ուստի պատկերելով բնությունը՝ իրականությունը, դիմել է բնական խոսքին: Ինչպես իր արձակ, այնպես էլ բանաստեղծական գործերը նա գրել է պարզ գրաբարով և միջին հայերենով, նախընտրել հստակ ոճը՝ «մեկին բանը», քանի որ նպատակ է ունեցել նաև հասկանալի լինել հանրությանն ու հետաքրքիր ձևերի մեջ արտահայտել իր գաղափարներն ու զգացումները:

Շնորհալին դիմել է բազմաթիվ արտահայտչամիջոցների և պատկերավորման հնարանքների: Նախասիրել է հատկապես անձնավորման հնարանքը՝ շնչավորելով և խոսեցնելով անշունչ առարկաներին: Այսպես, «Երկնքի և նրա զարդերի մասին» տիեզերագիտական բանքում խոսում է ինքը՝ անձնավորված Երկինքը, իսկ մանկավարժական բանքերից մեկում երեխաներին պիտանի բարոյական խրատներ են կարդում հայոց այբուբենի 36 տառերը: Ինչպես տեսանք, բանաստեղծն անձնավորել է նաև Եդեսիա քաղաքը, որ «նստած է որբ և այրի, տխուր դեմքով՝ որպես սգի»:

Բնության, քաղաքների ու մարտերի նկարագրությունների մեջ Շնորհալին կիրառել է գեղեցիկ համեմատություններ, փոխաբերություններ ու մակդիրներ՝ միշտ պահպանելով չափի զգացումը: Նույն հաջողությամբ կատարել է նաև վիպական նկարագրություններ ու քնարական զեղումներ:

Վիթխարի է Շնորհալու դերը հատկապես տաղաչափության ասպարեզում: Նա, Գրիգոր Մագիստրոսից հետո, տաղաչափության կիրառումն ընդունել է

որպես սկզբունք ու ծրագիր և ազատ չափից բացի կիրառել նաև կանոնավոր չափեր, որոնց մի մասը նա ինքն է առաջին անգամ գործածել: Նրա համոզմամբ՝ խոսքը չափի մեջ դրվելով՝ ավելի գեղեցկանում է, վայելչանում ու դառնում գրավիչ:

Իր չափածո գործերի մեծ մասը Շնորհալին գրել է հանգերով: Ընթերցողին չձանձրացնելու համար նա երբեմն միահանգությունից անցնում է բազմահանգության:

Շնորհալին, շարունակելով Գրիգոր Նարեկացու լավագույն ավանդույթները՝ միջնադարյան բանաստեղծությունն առավել մոտեցրել է ժամանակակից իմաստով բանաստեղծությանը...

Այսպիսով՝ իր նորօրինակ ու բարձրակարգ արվեստով Ներսես Շնորհալին ստեղծել է ինչպես հոգևոր-կրոնական մեծարժեք գործեր, այնպես էլ աշխարհիկ բանաստեղծության առաջին նմուշները՝ նպաստելով աշխարհիկ ոգու հետագա ծավալմանը մեր գրականության մեջ: Մեծ բանաստեղծի ողջ ստեղծագործությանը բնորոշ է մարդասիրական, ազգասիրական և ազատասիրական ոգին:

Հարցեր և առաջադրանքներ

1. Բանաստեղծը ո՞ւմ է ձոնել ազգային-հայրենասիրական թեմաներով գրված շարականները:
2. «Նորահրաշ պսակաւոր» հոգևոր-հերոսական երգում ո՞ւմ է փառաբանում հեղինակը:
3. Ի՞նչ գաղափար է արտահայտում «Առավոտ լուսո» ժամերգը:
4. Ո՞րն է «Հիսուս Որդի» բանքի թեման և գաղափարը:
5. Ո՞րն է մեր առաջին աշխարհիկ բովանդակությամբ գրված պատմաողբը:
6. Ներսես Շնորհալին ժողովրդական բանահյուսության հիման վրա չափածոյի ի՞նչ նոր գրական տեսակ ստեղծեց:
7. Վերարտադրե՛ք գրողի կենսագրությունը, ներկայացրե՛ք ապրած ժամանակաշրջանը, միջավայրը և կապեք նրա ստեղծագործության հետ:
8. Կենսագրությունից ելներով՝ գնահատե՛ք Շնորհալու կյանքն ու ստեղծագործությունը նրա ապրած ժամանակաշրջանի համատեքստում:
9. Ներկայացրե՛ք «Առավոտ լուսո» բանաստեղծության կառուցվածքը, առանձնահատկությունները:
10. Զուգահեռներ անցկացրեք «Առավոտ լուսո» բանաստեղծության բովանդակության և հեղինակի կենսագրության ու ապրած ժամանակաշրջանի միջև:
11. Բնագրից ելնելով՝ ներկայացրո՛ւ հեղինակի ներաշխարհը, նրա հույզերը՝ ապրած ժամանակաշրջանի ֆոնի վրա (անհատական աշխատանք):
12. Բնագրից դո՛ւրս գրեք մակդիրներն ու համեմատությունները՝ բացատրելով կիրառության նպատակը:
13. «Առավոտ լուսո» բանաստեղծությունից դո՛ւրս գրիր բանալի բառերը և կազմի՛ր

բովանդակությանը համապատասխան շարադրանք (անհատական աշխատանք):

14. Ներկայացրեք Շնորհալու բանաստեղծությունների լեզվաոճական առանձնահատկությունները՝ բերելով օրինակներ:
15. «Ողբ Եդեսիո» պոեմից դուրս գրեք ողբերգական վիճակ նկարագրող բառակապակցությունները:
16. Վերարտադրեք «Ողբ Եդեսիո» պոեմի գործողությունների գարգացման ընթացքը և նշեք թեման, զուգահեռներ անցկացրեք մեր ապրած օրերի հետ, գտեք ընդհանրություններ և տարբերություններ այլ ստեղծագործությունների հետ:
17. Ինչ խորհրդանիշ է ընտրել հեղինակը ողբը ներկայացնելու համար: Հիմնավորեք: Նկարեք խորհրդանիշը:
18. Պոեմի բովանդակությունից ելնելով՝ կազմեք պլան և կարճառոտ վերաշարադրեք արձակ շարադրանքով:
19. «Երկնքի և նրա զարդերի մասին» տիեզերագիտական բանքից դուրս գրեք հեղինակի գործածած անձնավորման հնարանքները: